ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 1167-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 1-ին կետի 15-րդ ենթակետով նախատեսված չափորոշիչ)

2016 թվականին Վայոց ձորի մարզի կառավարման մարմինների և բնակչության պատրաստումը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում

Գնահատման չափորոշիչներ	Կատարված աշխատանքները՝ ըստ ենթաչափորոշիչների
1. Բնակչության ազդարարման համակարգերի նախապատրաստում և գործունեության աշխատանքների կազմակերպում	Բնակչության ազդարարման համակարգը՝ էլեկտրական շչակների տեսքով, ներդրված է մարզի 29 համայնքներից 19-ում:
2.Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության թեմաներով հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական և օբյեկտային ուսումնավարժությունների կազմակերպում և անցկացում	ՀՀ Վայոց ձորի մարզում 2016 թվականին «Մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման տարեկան հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումները կատարվել են 100%-ով. - Մարտի 23-ին, հունիսի 24-ին, սեպտեմբերի 26-ին և դեկտեմբերի 23- ին մարզային փրկարարական վարչությունում Վայոց ձորի ՔՊ մարզային ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվել են հրամանատարական պատրաստության պարապմունքներ: - Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի բժշկական միվորումում, Ջերմուկ քաղաքի առողջության կենտրոնում և Եղեգնաձորի բժշկական կենտրոնում անցկացվել են <<Հիվանդների տարահանման միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում>> թեմայով օբյեկտային վարժանքներ: - Մարտի 1-ին՝ ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ Վայոց ձորի մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում անցկացվել են դասախոսություններ, իսկ մարզի 10 դպրոցներում <<Անձնակազմի պատսպարման իրականացումը

	<<Օդային պագնապ>> ազդանշանի դեպքում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ: - Ապրիլի 12-ին Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունում փրկարար ծառայողների հետ անցկացվել է <<ՄՓՎ անձնակազմի գործողությունները սողանքի առաջացման դեպքում>> թեմայով շտաբային ուսումնավարժություն: - Ապրիլի 14-ին <<ԱրմենՏել>> ՓԲԸ Եղեգնաձորի մասնաճյուղում անցկացվել է <<Եղեգնաձոր քաղաքում ուժեղ քամու հետևանքով վնասված կապի համակարգի վերականգնում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումվարաժություն: - Ապրիլի 27-ին <<ՀԷՑ>> ՓԲԸ Եղեգնաձորի տեղամասում անցկացվել է <<Վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացումը Ագարակաձոր համայնքի հոսանքազրկման դեպքում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություն: - Մայիսի 18-ին <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ <<Վայոց ձոր>> ԳԳՄ Վայքի տարածքային տեղամասում անցկացվել է <<Վայքի տարածքային տեղամասի անձնակազմի գործողությունները ցածր ճնշման գազատարի վթարի դեպքում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություն: - Հունիսի 15-ին Վայոց ձորի մարզի <<ԱրմենՏել>> ՓԲԸ Վայքի մասնաճյուղում անցկացվել է «Որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը «ԱրմենՏել» ՓԲԸ Վայքի մասնաճյուղի փլուզված մասնաշենքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն: - ՀՀ ԱԻՆ աշխատակցի օրվա կապակցությամբ Վայոց ձորի մարզի թվով 10 հանրակրթական դպրոցներում անցկացվել են <<Հրդեհի առաջացման դեպքում հրդեհաշիջման և տարահանման միջոցառումների իրականացում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ իսկ 8 ուսումնական հաստատություններում անցկացվել են դասախոսություններ <<ՀՀ ԱԻ նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները>> թեմայով: - Մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի

	համայնքների կողմից արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացված թվով 10 շտաբային ուսումնավարժությունների նախապատրաստմանը, ինչպես նաև մասնակցություն է ցուցաբերվել թվով 30 շտաբային ուսումնավարժությունների: - Հոկտեմբերի 20-ին Վայոց ձորի մարզում անցկացվել է <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով շտաբային ուսումնավարժություն: - Հոկտեմբերի 25-ին <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ <<Վայոց ձոր>> ԳԳՄ Եղեգնաձորի տարածքային տեղամասում անցկացվել է <<Վայոց ձոր>> ԳԳՄ Եղեգնաձորի տարածքային տեղամասի անձնակազմի գործողությունները բազմաբնակարան շենքի գազի արտահոսքի դեպքում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություն: - Հոկտեմբերի 27-ին՝ սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության կողմից Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցում անցկացվել է <<Տարահանման միջոցառումների իրականացումը երկրաշարժի առաջացման դեպքում>> թեմայով վարժանք, որին մասնակցել են նաև համայնքում գործող հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: - Նոյեմբերի 29-ին Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունում անցկացվել է <<ՄՓՎ անձնակազմի գործողությունները Հերհերի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում>> թեմայով շտաբային ուսումնավարժություն: - Դեկտեմբերի 6-ին <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ <<Հարավ-արևելյան>> տարածքային մասնաճյուղի Եղեգնաձորի տեղամասում անցկացվել է << Վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացումը Եղեգնաձոր քաղաքի ներքին ջրամատակարարման ցանցի վթարի դեպքում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություն: - Վայոց ձորի մարզպետարանի, մարզի կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների ուսուցման ծրագրով 2016թ. ընթացքում ՃԿՊԱ-ում անցկացվող դասընթացներին նախատեսված է եղել 15

	թեկնածուների մասնակցություն, սակայն դասընթացներին մասնակցել են 10 հոգի, որոնցից 2-ը՝ ուսուցիչ, 1-ը՝ քաղաքապետի տեղակալ, 2-ը՝ մանկապարտեզի տնօրեն, 4-ը՝ համայնքապետ, իսկը 1-ը՝ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի վարչության առաջատար մասնագետ:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ
ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ն.ՍԻՄՈՆՅԱՆ

18.01.2017թ.